ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՍՀՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ՈՒ ՂԵԿԱՎԱՐ

Փ. Ի. ԵՆԴՈՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

1922 թ. դեկտեմբերին, մեր հայրենիքում ստեղծվեց առաջին բազմազգ սոցիալիստական պետությունը՝ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը, մարդկության պատմության մեջ ազգերի ու ժողովուրդների առաջին կամավոր միությունը։ «Բանվորների և գյուղացիների բազմազգ պետության կազմավորումը մեծ Հոկտեմբերի գործի, ամբողջ երկրի մասշտաբներով կատարված հեղափոխական վերակերտումների շարունակությունն է։ Այն թելադրում է պատմական զարգացման օբյեկտիվ ընթացքով»[1]։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը փշրեց ազգային կաղապարային ճնշման լուծը Ռուսաստանում և զարգացման ու բարգավաճման մեծ հեռանկարներ բացեց ազգերի ու ժողովուրդների համար։ Հեղափոխության հաղթանակից հետո վերջ տրվեց բռնությանն ու ճնշմանը, ժողովուրդների միջև թշնամանք սերմանելու ու ազգային չարդերի քաղաքականությանը, որը կիրառում էին ցարիզմը և բուրժուազիան։

1917 թ. նոյեմբերին նորաստեղծ սովետական կառավարությունն ընդունեց «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիան» և «Ռուսաստանի ու Արևելքի բոլոր աշխատավոր մուսուլմաններին» կոչը, որոնց մեջ շարադրվեցին լենինյան ազգային քաղաքականության հիմնական սկզբունքները։ 1918 թ. հունվարին համառուսաստանյան Կենտգործկոմը ընդունեց «Աշխատավոր և շահագործվող ժողովուրդների իրավունքների դեկլարացիան», որով ամրագրվեց Ռուսաստանի բոլոր ազգությունների աշխատավոր դասակարդերի իսկապես ազատ ու կամավոր դաշինքի ստեղծումը։ Սովետների համառուսաստանյան III համագումարի որոշման համաձայն՝ 1918 թ. կամավոր հիմունքներով ստեղծվեց Ռուսաստանի Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետությունը։ Նույն թվականին Վ. Ի. Լենինն առաջ քաշեց սովետական ֆեդերացիայի սկզբունքներով ազգերի ու ժողովուրդների պետական միավորման խնդիրը։ 1919 թ. մարտին կուսակցության VIII համագումարը հավանություն տվեց սովետական կառավարության օրենսդրական բոլոր միջոցառումներին, որոնք ծրագրային նշանակություն ունեցան սովետական տիպի ֆեդերացիա ստեղծելու համար։ Համագումարից հետո՝ 1919 թ. մայիսին

---

[1] *ՍՄԿԿ Կենտկոմի որոշումը ՍՍՀՄ-ի կազմավորման 50-ամյակի նախապատրաստության մասին («Սովետական Հայաստան», 22 II 1972)։*

օտարերկրյա ինտերվենցիայի ահեղ օրերին Ուկրաինայի Կենտգործկոմը և Բելոռուսիայի պաշտպանության խորհուրդը դիմեցին ՌՍՖՍՀ-ի Կենտրոնական գործադիր կոմիտեին՝ հաստատել Սովետական հանրապետությունների ռազմա-քաղաքական դաշինք։ Վ. Ի. Լենինի ցուցումով և ՌԿ(բ)Կ Կենտկոմի որոշմամբ 1919 թ. հունիսի 1-ին ՌՍՖՍՀ Կենտգործկոմը դեկրետ ընդունեց Ռուսաստանի, Ուկրաինայի, Լատվիայի և Բելոռուսիայի սովետական հանրապետությունների միավորման և իմպերիալիզմի դեմ համատեղ պայքար մղելու մասին։ 1919 թ. ՌՍՖՍՀ-ի կազմի մեջ մտավ Թուրքեստանյան ինքնավար հանրապետությունը, իսկ 1920 թ. մյուս ինքնավար մարգերը։ 1920—1921 թթ. բուրժուա-ազգայնական կառավարությունների տապալումից հետո, սովետական հանրապետություններ ստեղծվեցին նաև Անդրկովկասում, որոնք նույնպես ռազմա-քաղաքական դաշինք հաստատեցին ՌՍՖՍՀ-ի հետ։ 1921 թ. մարտին տեղի ունեցավ ՌԿ(բ)Կ X համագումարը, որը հավաստեց Ռուսաստանի ազգերի ու ժողովուրդների պետական միավորման անհրաժեշտությունը։ Համագումարից հետո Վ. Ի. Լենինը գրեց իր հայտնի նամակը՝ ուղղված Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի և Լեռնային հանրապետությունների կոմունիստներին, առաջարկելով ամեն կերպ զարգացնել ազգերի ու ժողովուրդների փոխադարձ վստահությունը և ամրապնդել նրանց քաղաքական, տնտեսական կապերը։

1922 թ. հոկտեմբերի 6-ին տեղի ունեցավ ՌԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը, որը հաստատեց Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների միավորման վերաբերյալ Վ. Ի. Լենինի ցուցումներով կազմված նախագիծը։ Պլենումի որոշմամբ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին այն քննարկվեց ազգային հանրապետությունների կոմունիստական կուսակցությունների կենտկոմներում, իսկ դեկտեմբերին՝ տեղական կուսակցական կազմակերպություններում։

ՌԿ(բ)Կ Կենտկոմի որոշումների ոգով 1922 թ. նոյեմբերին մշակվեց ՍՍՀՄ-ի Սահմանադրության նախագիծը, որը արժանացավ ազգային հանրապետությունների կոմունիստական կուսակցությունների ու աշխատավորների հավանությանը։ Դեկտեմբերին ՌԿ(բ)Կ Կենտկոմը որոշեց հրավիրել Սովետների I համագումար՝ ստեղծել ՍՍՀՄ-ը։ Ուկրաինայի, Բելոռուսիայի և Անդրկովկասի սովետների համագումարներն արտահայտելով իրենց հանրապետությունների աշխատավորների կամքը, որոշում ընդունեցին միավորվելու մասին և ընտրեցին պատգամավորներ Սովետների համամիութենական I համագումարի համար։ Դեկտեմբերի 30—31-ը տեղի ունեցավ Սովետների համամիութենական I համագումարը, որը որոշում ընդունեց ՍՍՀՄ կազմավորման մասին։ Նույն օրը Վ. Ի. Լենինը գրեց «Ազգությունների կամ «ավտոնոմիզացիայի» հարցի շուրջը» նամակը, որի մեջ ցուցումներ տվեց, թե ինչպես կառուցել ու զարգացնել ազգային հանրապետությունները ՍՍՀՄ-ում։ Լենինը նամակում առաջարկեց նրանց հարաբերությունները կառուցել պրոլետարական ինտերնացիոնալիզմի հիմքի վրա և ամենայն հետևողականությամբ պայքար ծավալել պետական շինարարության հարցում դրսևորվող շովինիզմի ու տեղական նացիոնալիզմի ամեն տեսակի դրսևորումների դեմ. «...ոչ մի բան այնպես չի կասեցնում պրոլետարական դասակարգային համերաշխության զարգացումն ու ամրապնդումը, ինչպես ազգային անարդարությունը և «վիրավորված» նացիոնալները ոչ մի բանի նկատմամբ այնպես զգայուն չեն, ինչպես հավասարության զգացմունքի և այդ հավասարության խախտման նկատմամբ, իր

ընկեր պրոլետարների կողմից թեկուզ նույնիսկ անփութորեն, թեկուզ նույնիսկ կատակի ձևով այդ հավասարությունը խախտելու նկատմամբ»[2]։

1924 թ. հունվարի 31-ին Սովետների III համագումարը հաստատեց Վ. Ի. Լենինի ցուցումների հիմքի վրա մշակված ՍՍՀՄ առաջին Սահմանադրությունը և ամրագրեց միասնական պետության ձևավորումը։

ՍՍՀՄ-ի ստեղծումը կոմունիստական կուսակցության ամենախոշոր նվաճումներից մեկն է, որը անգնահատելի նշանակություն ունեցավ մեր երկրի բոլոր ազգերի ու ժողովուրդների համար։ «Հանրապետությունների միությունը, որը ստեղծվել է առանձին հանրապետությունների բանվորների և գյուղացիների հավասարության ու կամավորության սկզբունքներով, հանդիսանում է պրոլետարիատի առաջին փորձը անկախ երկրների միջազգային փոխհարաբերությունները կարգավորելու գործում և առաջին քայլը՝ աշխատանքի ապագա համաշխարհային Սովետական հանրապետություն ստեղծելու ուղղությամբ»[3]։

Անցած 50 տարիների ընթացքում ՍՍՀՄ-ը անցավ պատմական համակողմանի ստուգում և ցույց տվեց իր անհաղթահարելի ուժն ու նշանակությունը, համաշխարհային զարգացման գործում։ Այդ դրսևորվեց պատմական կարճ ժամանակամիջոցում մեր երկրում սոցիալիզմի կառուցման, կոմունիստական շինարարության նվաճումների, սոցիալիզմի համաշխարհային սիստեմի զարգացման և միջազգային կոմունիստական շարժման հաջողությունների մեջ։

ՍՍՀՄ-ի գոյության 50 տարիների ընթացքում կոմունիստական կուսակցությունը սովետական ժողովրդին զինեց սոցիալիզմի կառուցման գիտական պլանով, իրականացրեց երկրի սոցիալիստական ինդուստրացումը, գյուղատնտեսության կոոպերացումը և կուլտուրական հեղափոխությունը, որոնք համապատասխանում էին բոլոր ազգերի ու ժողովուրդների շահերին։

Սոցիալիզմի կառուցման լենինյան պլանը իրականացնելու համար, կուսակցությունը նախապես իրականացրեց նոր տնտեսական քաղաքականությունը (նէպ), որը և հանդիսացավ սոցիալիզմի ուղու կարևոր ու անհրաժեշտ էտապ։ Նէպ-ը տնտեսական շաղկապ եղավ գյուղի և քաղաքի միջև. ամրապնդվեց բանվորա-գյուղացիական դաշինքը և հաղթահարվեց երկրի քայքայվածությունը։ Մինչև 1925 թ. երկրի ժողովրդական տնտեսությունը հիմնականում վերակառուցվեց և տնտեսական ու քաղաքական նախադրյալներ ստեղծվեցին սոցիալիստական շինարարություն ծավալելու համար։

Սոցիալիզմի կառուցման հանգուցային խնդիրը սոցիալիստական ինդուստրացումն էր։ Ելնելով դրանից՝ կուսակցության XIV համագումարը երկիրը ինդուստրացնելու կուրս տվեց։ Կապիտալիստական շրջապատման և իմպերիալիստական ագրեսիայի սպառնալիքի պայմաններում 1926 թ. երկրում սկսվեց համագումարի տված կուրսի իրականացումը։ Արտադրողական ուժերի տեղաբաշխման ու զարգացման լենինյան սկզբունքների նշանաբանով ՍՍՀՄ-ի բոլոր ազգային հանրապետություններում, ի հաշիվ ներքին կուտակումների սկսվեցին սոցիալիստական ինդուստրիայի առաջին կառուցումները։ Կարճ ժամանակաշրջանում ՍՍՀՄ-ում ստեղծվեց ժամանակակից խոշոր արդյունաբե-

---

2 Վ. Ի. Լենին, Ազգային և ազգային գաղութային հարցի մասին, Երևան, 1957, էջ 731—732։

3 ՍՄԿԿ-Ն բանաձևերում և որոշումներում, մաս 1-ին, էջ 914։

րություն։ Ընդամենը երեք հնգամյակների (1929—1941) ընթացքում ՍՍՀՄ-ը դարձավ հզոր ինդուստրիալ տերություն և հասավ անտեսական լիակատար անկախության։

Սոցիալիստական ինդուստրացման շնորհիվ ՍՍՀՄ-ի ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքը 1913 թ. համեմատությամբ, 1957 թ. աճեց 33 անգամ, իսկ 1917 թ. համեմատությամբ՝ 46 անգամ։ Ընդ որում՝ մեքենաշինության և մետաղամշակման արտադրությունն ավելացավ ավելի քան 200 անգամ, էլեկտրաէներգիայի արտադրությունը՝ մոտ 110 անգամ։ 1957 թ. Սովետական Միությունում օրական արտադրվում էր այնքան արդյունաբերական արտադրանք, որքան Ռուսաստանում 1917 թ.։ Արդյունաբերության աճի տեմպերով ՍՍՀՄ-ը անցավ բոլոր կապիտալիստական երկրներից։ 1929 թ. համեմատությամբ 1955 թ. արդյունաբերական արտադրանքի աճի տեմպերը ՍՍՀՄ-ում կազմեցին 2049, ԱՄՆ-ում՝ 234, Անգլիայում՝ 181, Ֆրանսիայում՝ 125 %։ 1913 թ. մինչև 1956 թ. ընկած ժամանակամիջոցում մեկ շնչին ընկնող ամբողջ արդյունաբերական արտադրանքը ՍՍՀՄ-ում աճեց 21, ԱՄՆ-ում՝ 2,3, Անգլիայում՝ 1,6, Ֆրանսիայում՝ 1,8 անգամ։

Անցած 50 տարիների ընթացքում կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ և բանվոր դասակարգի բազմակողմանի օգնությամբ ՍՍՀՄ-ի գյուղատնտեսությունը արմատապես վերակառուցվեց։ Սոցիալիզմի բախտի համար վճռական նշանակություն ունեցող այդ խնդիրը լուծվեց փոշիացած գյուղացիական տնտեսություններից սոցիալիստական կոոպերացման անցնելու ուղիով։ Ընդամենը մեկ և կես տասնամյակում ՍՍՀՄ-ը դարձավ խոշոր սոցիալիստական գյուղատնտեսության երկիր։ Միլիոնավոր մանր անհատական տնտեսություններ միավորվեցին կոլտնտեսությունների մեջ։ Երկրում ստեղծվեց սովետական պետական տնտեսությունների և մեքենա-տրակտորային կայանների լայն ցանց։ Դրանով աշխատավոր գյուղացիությունը ընդմիշտ փրկվեց կուլակային ստրկացումից, քայքայումից ու աղքատացումից։ Երկրի սոցիալիստական ինդուստրացման, գյուղատնտեսության կոլեկտիվացման և համաժողովրդական սեփականության հաստատման հիմքի վրա արմատապես փոխվեցին դասակարգային հարաբերությունները։ Վերացվեցին շահագործող դասակարգերը և երկրում հաստատվեց սովետական հասարակության բարոյա-քաղաքական միություն։

Սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանում մեր երկրում իրականացվեց կուլտուրական հեղափոխություն։ Աշխատավոր մասսաները դուրս եկան հոգևոր ստրկացումից և հաղորդակից դարձան սովետական կուլտուրային։ Կուլտուրական հեղափոխությունը ՍՍՀՄ-ում տեղի ունեցավ անցյալի հոգևոր ժառանգության, համաշխարհային մշակույթի բոլոր արժանիքների յուրացման և քննադատական վերամշակման, անցյալի վերապրուկների ու նախապաշարմունքների վճռական հաղթահարման, աշխատավորների գիտակցության մեջ գիտական կոմունիզմի գաղափարների խոր արմատավորման հիման վրա[4]։

Կուլտուրական հեղափոխության շնորհիվ ՍՍՀՄ-ը դարձավ համատարած գրագիտության երկիր։ Լայն ծավալ ստացավ ժողովրդական կրթությունը։ 1956—1957 ուսումնական տարում ՍՍՀՄ-ում ուսուցման բոլոր ճյուղերում

---

[4] Տե՛ս Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50 տարին, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի թեզիսները, Երևան, 1967, էջ 20։

ընդգրկվեց 50,4 միլիոն մարդ։ Դա նշանակում է, որ Սովետական Միության յուրաքանչյուր չորրորդ քաղաքացի սովորում էր։

Զևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի ստեղծման, գիտության, արվեստի և գրականության զարգացման շնորհիվ ստեղծվեց սոցիալիստական մտավորականության բազմամիլիոն բանակ։ Եթե ցարական Ռուսաստանում միջնակարգ ու բարձրագույն մասնագիտական կրթությամբ մասնագետների թիվը ընդամենը 200 հազար էր, ապա 1957 թ. ՍՍՀՄ-ում այն հասավ 6 միլիոնի[5]։

Անցած 50 տարիների ընթացքում սոցիալիզմի կառուցման պրոցեսում մեր երկրում իրագործվեց լենինյան ազգային ծրագիրը։ Հաստատվեց ՍՍՀՄ-ում ապրող բոլոր ժողովուրդների սոցիալիստական եղբայրություն։ 1922 թ. դեկտեմբերին Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների կամովին միավորման և սոցիալիզմի կառուցման շնորհիվ վերացվեցին ազգային հակամարտությունները։ Փոխադարձ համագործակցության պայմաններում բոլոր ազգերը ձեռք բերեցին պետականություն և վերացրին իրենց պետական ու կուլտուրական դարավոր հետամնացությունը։ «Հենվելով փոխադարձ եղբայրական օգնության, առաջին հերթին ռուս մեծ ժողովրդի օգնության վրա, բոլոր սովետական ազգային հանրապետություններն իրենց մոտ ստեղծել են ժամանակակից արդյունաբերություն, բանվոր դասակարգի և ինտելիգենցիայի ազգային կադրեր, զարգացրել են ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրա։ Նախկինում հետամնաց շատ ժողովուրդներ սոցիալիզմին հասան չանցնելով զարգացման կապիտալիստական ստադիան»[6]։

Սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանում ձևավորվեցին սոցիալիստական ազգերը։ Նրանց բոլորի բնորոշ գիծը դարձավ պրոլետարական ինտերնացիոնալիզմը։ Ազգերի ներսում բանվոր դասակարգի և գյուղացիության, ինչպես նաև մտավորականության տնտեսական ու քաղաքական արմատական շահերի ընդհանրությունը նրանց դարձրեց համախմբված ու անխորտակելի։

Սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանում ամենավճռական նվաճումը եղավ այն, որ վերջ տրվեց արտադրության միջոցների մասնավոր սեփականությանը, հասարակական հակասությունների այդ աղբյուրի տիրապետությանը, ստեղծվեց սոցիալիզմի նյութատեխնիկական բազա, արտադրության միջոցների սոցիալիստական սեփականություն և ամբողջապես վերացվեց մարդու կողմից մարդու շահագործում ծնող պատճառները։

Սոցիալիզմի հաղթանակի և նրա հետ կապված արմատական փոփոխությունների շնորհիվ բարձրացավ աշխատավորների նյութական բարեկեցությունը։ Գյուղի և քաղաքի աշխատավոր դասակարգերը դարձան իրենց երկրի լիիշխան տերեր և հնարավորություն ստացան ապրել ավելի ունևոր և կուլտուրական։ Սոցիալիզմի բարձրագույն սկզբունքի՝ «Յուրաքանչյուրից՝ ըստ իր ընդունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ աշխատանքի» կիրառումով աճեց հասարակության բոլոր անդամների նյութական շահագրգռվածությունը։ Լավագույն ձևերով զուգորդվեցին անձնական ու հասարակական շահերը։

Սոցիալիզմի լիակատար ու վերջնական հաղթանակով ապահովվեց աշխատավորների էլ ավելի համախմբումը կոմունիստական կուսակցության ու

---

5 Տե՛ս ՍՍՀՄ պատմություն (սոցիալիզմի դարաշրջան), Երևան, 1959, էջ 964։

6 ՍՄԿԿ XXII համագումարի նյութերը, Երևան, 1962, էջ 436։

սովետական կառավարության շուրջը։ Մարքսիզմ-լենինիզմի ուսմունքի հիման վրա ստեղծվեց սովետական հասարակության բարոյա-քաղաքական միասնություն։ Սոցիալիստական հասարակության ամբողջ կյանքը կառուցվեց լայն դեմոկրատիայի հիմքի վրա։ Սոցիալիստական դեմոկրատիայի ծավալումը հուշակեց ժողովրդի իրավունքների պաշտպանության և անձի իրական աղատության։

Սոցիալիզմի կառուցումը մեր երկրում տեղի ունեցավ միջազգային բարդ իրադրության՝ իմպերիալիստական ագրեսիայի մշտական վտանգի պայմաններում։ Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը երկիրն այդ վտանգից հեռու պահելու համար հետևողականորեն վարեցին լենինյան արտաքին խաղաղասիրական քաղաքականություն։

ՍՍՀՄ-ի համաշխարհային սոցիալիզմի հուսալի հենարան գառնալը և նրա հեղինակության աճը անհանգստություն պատճառեց միջազգային իմպերիալիզմին։ Մեր երկրում սոցիալիզմի հիմնական կառուցումը ավարտելու և աստիճանաբար կոմունիստական շինարարությանն անցնելու ժամանակաշրջանում միջազգային իմպերիալիզմը սկսեց պատերազմ նախապատրաստել ՍՍՀՄ-ի դեմ։ Կոմունիստական կուսակցությունն ու սովետական կառավարությունը տեսնելով այդ վտանգը՝ միջոցառումներ ձեռնարկեցին երկրի պաշտպանությունը ամրապնդելու համար։ ՍՍՀՄ-ը չհարձակվելու պայմանագիր կնքեց Գերմանիայի հետ և եռանդուն ջանքեր ձեռնարկեց նախապատրաստվող պատերազմը կանխելու համար։ Սակայն միջազգային իմպերիալիզմի թողտվության քաղաքականության հետևանքով ֆաշիստական Գերմանիան 1941 թ. պատերազմ սկսեց ՍՍՀՄ-ի դեմ։ Շովինիզմի ու ռասիզմի թույնով լցված ֆաշիստական բանակները մխրճվեցին ՍՍՀՄ-ի տերիտորիան։ Սկսվեց սովետական ժողովրդի Հայրենական մեծ պատերազմը։ Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ամբողջ երկիրը վերածվեց մարտական ճամբարի, և 1945 թ. մայիսին ֆաշիստական բանակները անվերապահ կապիտուլյացիայի ենթարկվեցին, ֆաշիզմը կործանվեց։ 1945 թ. ջախջախվեց նաև միլիտարիստական Ճապոնիան։

Ֆաշիստական Գերմանիայի և միլիտարիստական Ճապոնիայի դեմ մղված պատերազմում հաղթանակով դուրս եկավ ՍՍՀՄ սոցիալիստական հասարակական ու պետական կարգը, սոցիալիստական ինդուստրիան ու գյուղատնտեսությունը, ժողովրդի գաղափարական միասնությունն ու հայրենասիրությունը, քաջարի սովետական բանակը։

Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովրդին կազմակերպեց ու ոգեշնչեց կոմունիստական կուսակցությունը։ Նա հսկայական կազմակերպչական ու քաղաքական աշխատանք ծավալեց թիկունքում ու ռազմաճակատում։ Հայրենանվեր աշխատանքի մղեց բանվոր դասակարգին, կոլտնտեսային գյուղացիությանն ու մտավորականությանը։

Ֆաշիստական Գերմանիայի ու միլիտարիստական Ճապոնիայի դեմ պատմական հաղթանակ տանելուց հետո կոմունիստական կուսակցությունը կազմակերպեց և ղեկավարեց սովետական ժողովրդի պայքարը պատերազմի ընթացքում երկրին հասցված վերքերը բուժելու համար։ 1945—1950 թթ. ժողովրդի հերոսական ջանքերով ժողովրդական տնտեսության նախապատերազմյան մակարդակը ոչ միայն վերականգնվեց, այլև զգալի չափով գերազանցվեց։

1950-ական թվականներին, սովետական ժողովուրդը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ձեռնամուխ եղավ սոցիալիզմի կառուցման կուրսի հետևողական կիրառմանը՝ հանուն նրա լիակատար և վերջնական հաղթանակի։ 1950-ական թվականների վերջերին մեր երկրում սոցիալիզմի կառուցումը ավարտվեց։ Կուսակցության XXI համագումարից հետո սկսվեց կոմունիստական շինարարության ծավալման ժամանակաշրջանը։ Կոմունիստական կուսակցությունը ժողովրդի ստեղծագործական աշխատանքն ուղղեց կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման հիմնական նպատակին։

Ելնելով ՍՄԿԿ XXII համագումարում ընդունված ՍՄԿԿ ծրագրի պահանջներից, կոմունիստական կուսակցությունը բացահայտեց սոցիալիզմից կոմունիզմին անցնելու օրինաչափությունները, մշակեց ժողովրդական տնտեսության կազմակերպման ու կառավարման գիտական սկզբունքները, տեսականորեն հիմնավորեց ու պարզորոշ դարձրեց կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումը, կոմունիստական հասարակական հարաբերությունների զարգացման և աշխատավորների մեջ կոմունիստական գիտակցություն դաստիարակելու ուղիներն ու մեթոդները։

ՍՄԿԿ XXIII համագումարի որոշումների համաձայն՝ կոմունիստական կուսակցությունը բազմաթիվ ու բազմապիսի միջոցառումներ ձեռնարկեց գիտատեխնիկական հեղափոխության, ժողովրդական տնտեսության արդյունավետության բարձրացման եղանակների մշակման և նյութական ու բարոյական խթանների կատարելագործման ուղղությամբ։

Կոմունիստական կուսակցության տնտեսական, կազմակերպական և գաղափարական-դաստիարակչական աշխատանքի շնորհիվ վերջին տասնամյակում կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման և ժողովրդական տնտեսության մասշտաբները ընդլայնելու ու զարգացնելու ուղղությամբ հրսկայական տեղաշարժեր կատարվեցին։ Գերադաս տեմպերով զարգացավ տընտեսության հիմքը՝ ծանր արդյունաբերությունը։ Արդյունաբերական արտադրության ընդհանուր ծավալի մեջ աճեց ծանր ինդուստրիայի տեսակարար կշիռը։ Այդ «արտադրության ներկայիս մասշտաբները ակնբախորեն պատկերացնելու համար բավական է ասել, որ միայն 1970 թվականին մոտավորապես երկու անգամ ավելի արդյունաբերական արտադրանք թողարկվեց, քան նախապատերազմյան բոլոր հնգամյակներում՝ միասին վերցրած»[7]։

Ծանր արդյունաբերության բազայի վրա խոշոր թռիչք կատարվեց գիտության ու տեխնիկայի նվաճումների համակողմանի օգտագործման, ամբողջ հանրային արտադրության ինդուստրիալ զարգացման, նրա արդյունավետության ու աշխատանքի արտադրողականության բարձրացման ուղղությամբ։ Որակական խոր փոփոխություններ կատարվեցին ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում։ Ստեղծվեց արտադրության կազմակերպման ու կառավարման ժամանակակից արդյունավետ սիստեմ։ Կատարելագործվեց տնտեսության միջճյուղային կառուցվածքը, արտադրությունը ավելի մասնագիտացվեց։ Հասարակական կյանքի տարբեր բնագավառներում գիտության արմատավորման, տնտեսական զարգացման տեմպերի արագացման, գիտատեխնիկական առաջադիմության առավել օգտագործման շնորհիվ տեղի ունեցավ սովե-

---

7 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ կենտկոմի հաշվետու զեկուցումը ՍՄԿԿ XXIV համագումարին, Երևան, 1971, էջ 51։

ական բոլոր մարդկանց նյութական ու կուլտուրական պահանջմունքների առավել բարձրացում։

Վերջին տասնամյակում կոմունիստական շինարարությանը համընթաց հաջողությամբ լուծվեցին քաղաքական սիստեմի զարգացման, բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության և մտավորականության էլ ավելի մերձեցման, քաղաքի և գյուղի, մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև եղած էական տարբերությունների աստիճանական հաղթահարման, սովետական ժողովրդի բարոյա-քաղաքական դաստիարակության խնդիրները։ Կուսակցության ղեկավարությամբ նոր քայլեր կատարվեցին յուրաքանչյուր եղբայրական սովետական հանրապետության զարգացման, ՍՍՀՄ-ի ազգերի ու ազգությունների մերձեցման և նրանց միջև ներդաշնակ հարաբերություններ հաստատելու ուղղությամբ։

Էական տեղաշարժեր կատարվեցին սոցիալիստական դեմոկրատիայի հետագա ծավալման, պետական կառավարման գործում աշխատավորների ակտիվության բարձրացման և աշխատավորների գաղափարական-քաղաքական դաստիարակության, նոր մարդու ձևավորման ասպարեզում։

Կոմունիստական շինարարության ծավալման ուղղությամբ մեր երկրում կատարված վերոհիշյալ տեղաշարժերը անխուսափելիորեն կապվեցին միջազգային հարաբերությունների նոր, սոցիալիստական տիպի կազմավորման ու զարգացման հետ, որը հիմնված է սոցիալիստական պետությունների իրավահավասարության ու ազգային սուվերենության, համակողմանի փոխշահավետ համագործակցության և փոխօգնության սկզբունքների վրա։

Պահպանելով հավատարմությունը Լենինի պատգամներին, կոմունիստական կուսակցությունն ու սովետական կառավարությունը հեղափոխականորեն պաշտպանեցին սոցիալիստական պետությունների փոխհարաբերությունների համատեղ մշակված նորմաններն ու սկզբունքները, խաղաղությունն ու միջազգային անվտանգությունը և ստեղծագործական աշխատանքի բարենպաստ պայմաններ ստեղծեցին կոմունիզմ կառուցող սովետական ժողովրդի համար։

ՍՄԿԿ XXIV համագումարը հանրագումարի բերեց սովետական ժողովրդի ձեռք բերած պատմական նվաճումները և նախանշեց նոր բնագծեր դրանք հետագայում ծավալելու և կոմունիզմի կառուցումը նոր թափով առաջ մղելու համար։

КОММУНИСТИЧЕСКАЯ ПАРТИЯ СОВЕТСКОГО СОЮЗА— ОРГАНИЗАТОР И РУКОВОДИТЕЛЬ СССР

П. И. ЕНГОЯН

Доктор исторических наук

Резюме

После победы Октябрьской революции Советская власть в 1917—1918 гг. приняла ряд декретов, подтвердивших добровольный союз трудовых классов всех наций России.

В 1919 г.—VIII, а в 1921 г.—X съезды РКП(б) одобрили эти законодательные мероприятия, имеющие решающее значение в деле образования Союза Советских Социалистических Республик.

В декабре 1922 г. состоялись съезды Советов национальных республик. Съезды подтвердили волю народов объединиться в государстве, и 30—31 декабря этого же года на первом Всесоюзном съезде Советов было принято решение об образовании СССР.

За минувшие 50 лет советская страна прошла трудный путь испытаний и стала надежной, крепкой защитой и опорой международного социализма. В связи с 50-летием образования СССР ЦК КПСС в своем постановлении отмечал, что Советский Союз, руководствуясь решениями XXIV съезда КПСС, добьется новых экономических, политических и культурных успехов.